ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 15

«10» 04 2019 թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԷԹԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով դատախազներին էթիկայի վերաբերյալ հարցերով խորհրդատվություն տրամադրելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Դատախազներին էթիկայի վերաբերյալ հարցերով խորհրդատվություն տրամադրելու նպատակով ստեղծել հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) հետևյալ կազմով՝

Դավիթ Մելքոնյան -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,
Արմեն Նիկողոսյան -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ:

2. Սահմանել հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2019թ. ապրիլի 10-ի N 15 հրամանի

ԿԱՐԳ

Դատախազներին էթիկայի վերաբերյալ հարցերով խորհրդատվություն տրամադրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի գործունեության

1. Սույն կարգով սահմանվում են դատախազներին էթիկայի վերաբերյալ հարցերով խորհրդատվություն տրամադրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության կարգն ու պայմանները:

2. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է մշտական հիմունքներով՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովը՝

1) դատախազներին, ըստ անհրաժեշտության, տրամադրում է խորհրդատվություն էթիկայի վերաբերյալ հարցերով,

2) խորհրդատվության արդյունքներով կազմում և տվյալ դատախազին է տրամադրում հայցվող խորհրդատվության վերաբերյալ հանձնաժողովի ստորագրությամբ պատճառաբանված եզրակացություն,

3) ապահովում է խորհրդատվության և տրամադրած եզրակացության գաղտնիությունը:

4. Հանձնաժողովի եզրակացությունը այլ անձանց (պետական մարմիններին և կազմակերպություններին) փոխանցելն արգելվում է, անգամ դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դեպքում:

5. Լիարժեք խորհրդատվություն տրամադրելու նպատակով, հայցվող խորհրդատվության շուրջ ուսումնասիրություններ իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովն իրավունք ունի դատախազից պահանջելու անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր:

6. Հանձնաժողովը եզրակացությունը տրամադրում է խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ դատախազի դիմումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում: